

Յոյս

Արիւնիս մէջ սընանոյ հըրեղէն որդ կամ ոգի...
 Կը ծընիս միշտ երջանիկ... հոգիս ֆեզմով կ'ամոֆի.
 Կը բացուին լայն ֆամբաներ հոն ուր անձան էր մըքին,
 Ու երազներըս ֆեզմով պատմունաններ կը հագնին:

Կախարդական ճըպոտն ես, երբ կը շարժիս դուն իմ մէջ,
 Կամ իմ մըսոյ մարմինիս փարոյ արեւ փողփողէջ.
 Աղջիկ՝ լոյսէ մարմինով, ժըպիտներով ցանկալի,
 Նայուածքներուդ տակ կ'ըլլայ անկարելին՝ կարելի:

Ըսֆանչացած կը վագեմ ես ֆեզի հետ ափէ ափ,
 Խոստումներդ երբ տեղան վըրաս տարափ առ տարափ.
 Այլ, շընչասպառ կ'իշնամ մերթ՝ արշաւըս դեռ անաւա՛րտ:

Յո՛յս, կը ֆանչնամ ֆեզ հիմա՝ իբրեւ պոռնիկ պըննագարդ,
 Պատրոյ պորտիդ հըմայֆով կը ֆամես կեանքըս շիթ շիթ.
 Կ'անիծեմ ես, երբ փախչիս, վայրկեանը չար ծընունդիդ:

ՍԱՐԳԻՍ ՄԵՀԵԱՆ

Պրումմանա, 20 դեկտ. 1931